

12-2-ԲՀ4-Ղ5-6

Պաշտոնի Անվանում

Խմբի ղեկավար

Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ | Ընդհանուր աշխատանքների խումբ | Խմբի ղեկավար

Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ | Քրեակատարողական հիմնարկի պետ 12-2ԲԾ-ԲՀ4-Գա-1

Ենթակա և հաշվետու է

Խմբի ղեկավարը հաշվետու և անմիջական ենթակա է Հիմնարկի պետին:

Ենթակա և հաշվետու պաշտոններ

Խմբի ղեկավարին անմիջական ենթակա և հաշվետու են Խմբի աշխատողները:

Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Խմբի

ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Խմբի փաստաթղթավարներից մեկը:

Աշխատավայր

Հայաստան, Կոտայքի մարզ, ք.Հրազդան 2301:

Աշխատանքի բնույթը (գործառույթներ)

1. ապահովում է հասցեագրված փաստաթղթերի՝ անմիջապես կատարողին հանձնելու, դրանց ժամանակին կատարումն հսկելու աշխատանքները.
2. ապահովում է «Mulberry» համակարգով համապատասխան աշխատանքների կատարումը.
3. ապահովում է փաստաթղթավորման՝ սահմանված կարգով իրականացումը.
4. յուրաքանչյուր տարվա համար ապահովում է փաստաթղթերի և մատյանների անվանացանկի կազմումը.
5. ապահովում է էլեկտրոնային արխիվացման աշխատանքների իրականացումը

Իրավունքները

1. Խմբի աշխատողներից պահանջել հրամանների և այլ փաստաթղթերի նախագծերը համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին.
2. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.
3. ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ Հիմնարկի պետին.
4. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներ.

Պարտականությունները

1. Հիմնարկի պետին պատշաճ և ժամանակին զեկուցել մուտքագրված փաստաթղթերը.
2. հետևել դատապարտյալների, կալանավորված անձանց և քաղաքացիների կողմից ստացված դիմումների ժամանակին առաքմանը և կատարմանը համապատասխան ստորաբաժանման կողմից.
3. նախապատրաստել գիտական և պատմական արժեք չներկայացնող ժամկետանց փաստաթղթերի և մատյանների ոչնչացման ցուցակները և կազմել համապատասխան ակտ.
4. դատապարտյալների, կալանավորված անձանց և քաղաքացիների կողմից գրված դիմումները ժամանակին զեկուցել ղեկավարությանը

Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի՝ մարզերում, համայնքներում և վարչական շրջաններում տեղակայված կառուցվածքային ստորաբաժանման

կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի՝ մարզերում, համայնքներում և վարչական շրջաններում տեղակայված կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
 - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
 - Ծրագրերի կառավարում
 - Որոշումների կայացում
 - Բարեվարքություն
 - Աշխատակազմի կառավարում
 - Խնդրի լուծում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
 - Բանակցությունների վարում
 - Ժամանակի կառավարում

- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում